

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ» ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Սուրեն Մանուկյան

Հայոց ցեղասպանության պատմությունը հսկայական մարդկային զանգվածներին ոճրագործության մոռոզ գործընթաց ներգրավելու պատմություն է: Միլիոնավոր մարդիկ այս կամ այն կերպ մասնակցեցին հայերի ոչնչացման գործընթացին. կազմակերպեցին, աջակցեցին կամ իրականացրին հայերի բնաջնջման նախագիծը<sup>1</sup>: Սպանության գործընթաց հասարակ քաղաքացիներին ներգրավելու համար Օսմանյան կայսրության իշխանությունները տարբեր հնարքներ օգտագործեցին՝ համոզելու համար մահմեդականներին՝ թուրքերին, քրդերին, կովկասցիներին, որ հայերի ոչնչացումը պետության և ազգի փրկության կարևորագույն նախապայմանն է՝ մեղադրելով հայերին բազմաթիվ մեղքերում, այդ թվում նաև՝ իսլամի դեմ իբր գործած և գործելիք մեղքերի մեջ, պատերազմում հակառակորդին օգնելու մեջ, ապամարդկայնացնելով կայսրության հայկական բնակչությանը, ինչպես նաև խրախուսելով զանգվածային մասնակցությունը ոչնչացվող հայերի ունեցվածքի հաշվին հարստանալու հեռանկարով:

Թուրքական հասարակության մեջ ցեղասպանություն իրականացնելու, սպանության գործընթաց ներգրավվելու ցանկությունը մեկ օրում ու հանկարծակի չառաջացավ, այն հիմնված էր դարերով եկած, ամուր արմատացած որոշակի սոցիալական կարծրատիպերի և ընկալման կադապարների վրա: Բնակչությանը սպանության գործընթաց ներգրավելու բոլոր ջանքերն անարդյունավետ են, եթե դրա համար համապատասխան հող չկա, եթե չկան գաղափարական նախադրյալներ: Գրեթե բոլոր ցեղասպանությունների պարագայում ոճրագործ հասարակություններում պարզ նշմարելի են այն գաղափարները, կարծրատիպերը, որոնք հնարավոր են դարձնում հասարակ մարդկանց հավաքագրումը ցեղասպանական գործողությունների մեջ: Այս նախապաշարմունքները, հասարակության մեջ գոյություն ունեցող ելակետային դրոյթները, որոնք կարելի է անվանել նաև «մշակութային արմատներ», շատ կարևոր են, քանի որ տալիս են այն հիմքը, որի վրա հետագայում հնարավոր է լինում կառուցել «ատելության տաճարը», լայնամասշտաբ ու նպատակաուղղված ատելության քարոզչություն իրականացնել: Օրինակ՝ Հոլոքոստի պարագայում նման հիմք հանդիսացավ հակասեմականությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Սպանության հիերարխիայի մասին մանրամասն տես օրինակ՝ Ս.Մանուկյան, Հայոց ցեղասպանության ոճրագործների հիերարխիայի հարցի շուրջ, *Ցեղասպանագիտական հանդես*, № 2(2), 2014:

<sup>2</sup> Հակասեմականության մասին մանրամասն տե՛ս օրինակ՝ Flannery, Edward H. *The Anguish of the Jews: Twenty-Three Centuries of Antisemitism*, New York, Paulist Press, 1965., Langmuir, Gavin I. *History, Religion, and Antisemitism*, Berkeley, University of California Press., 1990, Perry, Marvin, and Frederick M. Schweitzer, *Antisemitism: Myth and Hate from Antiquity to the Present*, New York, Palgrave Macmillan, 2002, Poliakov, Léon, *The History of Anti-Semitism*, 4 volumes. New York, Vanguard Press, 1974–1985:

Իլլինոյսի համալսարանի պրոֆեսոր Հարի Թրիանդիլը սահմանում է, որ մարդու մտածողությունը և զգացմունքներն այն մշակույթի արգասիքն են, որում նա ապրում է: Նա նաև հավելում է, որ անհատապաշտ մշակույթներին պատկանող մարդիկ ավելի անկախ են մշակութային նորմերի ազդեցությունից, և ընդհակառակը, կոլեկտիվիզմի վրա հիմնված հասարակություններում, կամ ինչպես նա է անվանում, «ընտանեկան նորմերի գերակայությամբ գյուղատնտեսական ազգերը», հակված են խմբային մտածողության<sup>3</sup>: Օսմանյան հասարակությունը, ինչպես և մահմեդական ցանկացած հասարակություն, հիմնականում հենց համայնքային մտածողությամբ հանրություն է, և հետևաբար հանրային մշակութային նորմերի մեծ ազդեցությունն անհատի մտածողության վրա բացահայտ է:

Յոհան Գոլդհագենն իր վիճահարույց «Հիտլերի պատրաստական դահիճները» գրքում պնդում է, որ նացիստական ռեժիմը նախագծեց Հոլոքոստը՝ չգործադրելով մեծ ջանքեր, քանի որ գերմանացիները պատրաստ էին և շատ դեպքերում հոժարական վերաբերմունք ունեին հրեաների նկատմամբ հաշվեհարդար տեսելու գործին: Ըստ Գոլդհագենի՝ Հոլոքոստի ժամանակ սպանությունների դրդելու ընթացքում վարչակարգը ստիպված չէր հաղթահարել բնակչության մոտ առկա քարոյական տատանումները կամ դժկամությունը, քանի որ միջին գերմանացին ներծծված էր ծայրահեղ հակասեմականությամբ: Այս զգացումները թույլ կտային նրան անհրաժեշտության դեպքում հեշտությամբ ներգրավվել հրեաների սպանությունների մեջ: Հիտլերի կողմից հռչակված «հրեաներին բնաջնջելու ազգային նախագիծը» ուղղակի մարդկանց հնարավորություն տվեց անելու այն, ինչ նրանք վաղուց ցանկանում էին անել<sup>4</sup>, ավելին, նման գործողություններն ընկալվում էին իբրև դրական արարք: Սա «մշակութային» նախատրամադրվածության հետևանք էր:

Նմանատիպ երևույթ կարելի է նկատել նաև Հայոց ցեղասպանության պարագայում: Օսմանյան կայսրությունում հնարավորության դեպքում թուրք և քուրդ բնակչության մի զգալի հատված միշտ պատրաստ էր ներգրավվելու սպանությունների մեջ և կատարելու այն, ինչ նրանք միշտ էլ ցանկացել են անել: Նրանք հակված էին սպանելու և բռնություն կիրառելու, քանի որ հավատացած էին, որ հայերի բնաջնջումը ճիշտ և «նորմալության» իրենց ընկալման մեջ տեղավորվող երևույթ էր: Սա ոչ թե ատելություն էր հայերի հանդեպ, քանզի ատելությունը հանրային քարոզչության և ռացիոնալացման հետևանք էր, այլ ավելի շուտ հայերի նկատմամբ արհամարհանքի և անարգանքի հետևանք, երբ հայերին ընկալում էին իբրև երկրորդ կարգի, ավելի ցածր կարգավիճակ ունեցող էակներ: Այս արհամարհանքը դարձավ մահացու վտանգավոր, երբ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո քրիստոնյաները՝ «երեկվա ստրուկները», փորձեցին հավասարություն

<sup>3</sup> Steven Baum S, *The Psychology of Genocide: Perpetrators, Bystanders, and Rescuers*, Cambridge University Press, 2008, p. 47.

<sup>4</sup> Daniel Jonah Goldhagen, *Hitler's Willing Executioners: Ordinary Germans and the Holocaust*, Knopf Doubleday Publishing Group, 2007, pp. 7-9.

պահանջել և նույնիսկ երբեմն մրցել իրենց նախկին «տերերի» հետ՝ օգտագործելով Սահմանադրությունը և նրա բերած նոր հնարավորությունները:

Գրան էր գումարվում թուրքերի երկարամյա անհանդուրժողականությունը «այլի» նկատմամբ: Հայերի և քրիստոնյաների ընկալումներն իբրև շարունակական չարիք ընկած էին շատ թուրքերի մտածողության մեջ: Պանիսլամիզմը, պանթուրքիզմը և թուրքիզմը դարձան ընդամենը միջոցներ, որոնց օգնությամբ գործի դրվեցին արդեն իսկ մարդկանց գիտակցության մեջ արմատացած նախապաշարմունքները: Նույն երևույթն ենք նկատում նաև այլ ցեղասպանությունների, մասնավորապես Հոլոքոստի, Ռուանդայի ցեղասպանության պարագայում<sup>5</sup>:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության դեպքում խոսքը հայերի նկատմամբ երկար ժամանակ գոյություն ունեցող փաստացի ռասիստական ատելության և խնդիրները հայերի կոտորածների միջոցով լուծելու պետական ավանդույթի մասին է:

Իսկ այդ ավանդույթը մահաեղականների մտածողության մեջ երկար ժամանակահատվածի ընթացքում ձևավորել էր հայերի երեք «պատմական» ընկալումներ՝ հայերը որպես «անհավատներ», որպես «ստորադասներ» և հայերն իբրև «հնարավոր գոհ»: Այս երեք ընկալումները երբեմն հանդես էին գալիս իբրև առանձին երևույթներ, իսկ հաճախ նաև միահյուսվում և միաձուլվում էին մեկ զգացման մեջ:

### ա. Հայերը որպես «անհավատներ»

Նախապաշարումների մի զգալի մասը կապված է կրոնական գաղափարների և զգացումների հետ: Գրեթե բոլոր մեծ կրոններում կա հստակ բաժանում «մենք և նրանք» երկվության մեջ: «Մենք»-ը նույն կրոնը դավանող անհատներն են, իսկ «նրանք»-ը՝ այլադավանները: Քրիստոնեության վրա հիմնված մշակույթներում հաճախ որպես «այլքը», «օտարները» ընկալվում են հրեաները, իսկ մուսուլմանական հասարակությունում՝ քրիստոնյաները, հրեաները և այլ ոչ մուսուլմաններ:

Իսլամը բավականին շատ հնարավորություններ է պարունակում այլադավաններին, այդ թվում նաև՝ քրիստոնյաներին վերաբերվելու որպես ուրացած, մոլորյալ տարրեր, որոնց ճշմարիտ ուղու վրա վերադարձնելը իսլամի պարտականություններից մեկն է: Ընդ որում, այդ ճանապարհին հնարավոր է տարրեր միջոցների կիրառումը:

Մյուս միաստվածային կրոնների նման Իսլամն ունի թիրախ խմբին նաև որպես արմատապես չար, Աստծո հանդեպ անուղղելի թշնամական վերաբերմունք ունեցող բնորոշելու կարողություն և հետևաբար ունի ցեղասպանության համար մի առանձին հզոր և արդյունավետ լեգիտիմացում հաղորդելու ներուժ: Ջանգվածային սպանությունն այս դեպքում հայտարարվում է պատկերացրած «ճշմարիտ եղբայրության և երջանկության իդեալական աշխարհը» իրականություն դարձնելու համար նպաստող գործոն: Ջանգվածային սպանությունը դադարում է լինել

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Peter Uvin, *Tragedy in Rwanda*, Environment, 1996, René Lemarchand, *Disconnecting the threads: Rwanda and the Holocaust reconsidered*, *Journal of Genocide Research*, 2002, Vol.4, Issue 4

հանցագործություն և դրա փոխարեն դառնում սրբազան ճշմարտության, բարության և քաղաքակրթության պաշտպանություն<sup>6</sup>:

Ինչպես նշում է ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, Գուրանում առկա «Չկա պարտադրանք հավատքում» արտահայտությունը չեղյալ է հայտարարվել (մենտոն) Մուհամեդ մարգարեի հետևյալ հրամանով՝ «պատերազմել անհավատների դեմ և դաժան լինել նրանց հանդեպ»<sup>7</sup>: Այն քառյակը, որը նկարագրում է այն ոչ մուսուլմանների իրավական և քաղաքական կարգավիճակը, որոնց հողերը նվաճվել են իսլամական մարտիկների կողմից, ասում է՝ «Մարտնչել նրանց դեմ, ովքեր չեն հետևում ճշմարիտ կրոնին, մինչև որ նրանք կվճարեն ջիզյե, ենթակայի իրավունքով և նվաստացված»<sup>8</sup>: Մա հիմնարար նախապայման է՝ պատերազմն ավարտելու և գթասրտություն ցուցաբերելու համար:

Այս պայմաններում իսլամը դառնում էր զորեղ միջոց, որը կարող էր օգտագործվել հայերի նկատմամբ գոյություն ունեցող բացասական վերաբերմունքը՝ զանգվածային ոչնչացման վերածելու համար:

Հակաքրիստոնեական տրամադրությունները շատ ուժեղ էին օսմանյան հասարակության մեջ: Նրանք հաճախ օգտագործվում էին՝ անկարգություններ ու կոտորածներ կազմակերպելու համար: Օրինակ, 1909 թ. Ադանայի ջարդերի ընթացքում մահմեդական հոգևորականները հանդես եկան հատուկ ֆեթվայով, որը հաստատում էր, որ իսլամում ընդունելի է քրիստոնյաների սպանությունը, և կոչ արեցին հավաքված բազմությանը մասնակցել հայերի կոտորածին: Հետագայում թշնամանքը կայսրության քրիստոնյա բնակչության հանդեպ ավելի աճեց: Ընդ որում քրիստոնյաներն ընկալվում էին իբրև մեկ միասնական հանրության մաս անկախ ազգային կամ նույնիսկ պետական պատկանելությունից: Այսպես, հայ պատգամավոր Վահան Փափագյանը նկարագրում էր մի իրավիճակ, երբ Իտալիայի և Թուրքիայի միջև 1911-1912 թթ. ընթացող Տրիպոլիտանական պատերազմի<sup>9</sup> ժամանակ հանրության մեջ գերիշխող տրամադրություններն իրենց արտացոլումը գտան նաև Օսմանյան խորհրդարանում: Թուրքերի վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ վերածվել էր մաքուր ատելության, կարծես դա հայերը լինեին, որ

<sup>6</sup> Richard L. Rubenstein, *Jihad and Genocide: The Case of the Armenians*, in *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, edited by Steven Leonard Jacobs, Lanham, MD: Lexington Books, 2009, p. 119.

<sup>7</sup> Koran, Ch. 9, verse 73 in Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, 2003, p. 4.

<sup>8</sup> Koran, Ch. 9, verse 29. See also C.E. Bosworth, "The concept of Dhimma in early Islam." in *Christians and Jews in the Ottoman Empire*, edited by B. Braude and B. Lewis, vol. 1, New York, 1982, p. 41 in Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide...*, p. 4.

<sup>9</sup> Իտալա-թուրքական պատերազմ, Տրիպոլիտանական կամ Լիբիական պատերազմն ընթացավ 1911-1912 թթ. Օսմանյան կայսրության հյուսիսաֆրիկյան Տրիպոլիտանիա և Կիրենաիկա նահանգներում: Պատերազմի արդյունքում Թուրքիան պարտավորվեց ինքնավարություն շնորհել Տրիպոլիտանիային ու Կիրենաիկային և զորքերը դուրս բերել այդ մարզերից: Թեև հաշտության պայմանագիրը չէր ճանաչում իտալական անեքսիան, Տրիպոլիտանիան և Կիրենաիկան փաստորեն վերածվեցին իտալական գաղութի, որն ստացավ Լիբիա անունը:

կոչվում էին թուրքերի դեմ Տրիպոլիտանիայում<sup>10</sup>: Նույն զգացումներն ավելի ընդգծված արտահայտվեցին Բալկանյան պատերազմների (1912-1913 թթ.) և դրանցում կրած պարտությունների արդյունքում: Ընդ որում պարտություններ այն բալկանյան ժողովուրդների կողմից, որոնք չորս-հինգ դար գտնվում էին թուրքերի իշխանության տակ, և որոնց թուրքերն անվանում էին ոչ այլ ինչ, քան «այգեպաններ», «խոզարածներ» և «ողորմելի անհավատներ»: Թուրք զինվորը վերադառնում էր ճակատամարտից, որտեղ «խաչը» տապալել էր «կիսալուսինին», երեկվա ռայան հաղթանակ էր տարել: Թուրքական քարոզչությունը շահարկում էր մուսուլմանների մոլեռանդությունը՝ նրան ավելի ծայրահեղական բնույթ հաղորդելով<sup>11</sup>:

Արտաքին թշնամին, որը քրիստոնեական տերություն էր, ուղղակիորեն նույնացվում էր սեփական պետությունում ապրող քրիստոնյաների հետ: Եվ օսմանյան իշխանությունները ջանք չխնայեցին փորձելու համար օգտագործել պատերազմի ժամանակ մահմեդականների ընդհանուր հակակրանքը նաև սեփական քրիստոնյա հպատակների նկատմամբ:

Թեև ընդունված է համարել, որ Հայոց ցեղասպանության ճարտարապետները ներշնչված չէին իսլամով, իսկ նրանց գործողությունները պատճառաբանված չէին կրոնական անհանդուրժողականությամբ, սակայն ինչպես իրավացիորեն նշում է սոցիոլոգ, ցեղասպանագիտության հիմնադիրներից Լեո Քուպերը, երիտթուրքական առաջնորդների մղումները պարփակված չէին միայն քաղաքական փիլիսոփայության, այլ նաև խոր և անգիտակից մակարդակում այն անտեսանելի ազդեցությամբ, որ ուներ մշակութային միջավայրը, որն էլ իր հերթին իսլամական էր<sup>12</sup>:

Բացի այդ, իսլամի չափազանց մեծ համախմբող ներուժը չէր կարող չօգտագործվել Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպես նաև ցեղասպանության իրականացման ընթացքում:

Պատերազմի սկզբում՝ 1914 թ. նոյեմբերի 16-ին, ջիհադ հայտարարվեց, ինչը մեծապես նպաստեց կայսրության բնակչության մոլեռանդության ուժեղացմանը<sup>13</sup>: Զիհադի հայտարարումն առանձնապես մեծ դերակատարում չունեցավ պատերազմի ծավալման տրամաբանության մեջ, քանի որ նրա հիմնական նպատակներից մեկը՝ հանել քրիտանական և ֆրանսիական գաղութներում և Ռուսական կայսրությունում ապրող մուսուլմաններին իրենց մետրոպոլիաների դեմ, չիրականացավ: Սակայն ցեղասպանության իրականացման պարագայում այն բավականին արդյունավետ գործիք հանդիսացավ: Այն լեգիտիմացրեց հասարակ, շարքային մուսուլմանի ձգտումը՝ մասնակցելու զանգվածային սպանություններին, դարձնե-

<sup>10</sup> Փափազյան Վ., *Իմ հուշերը*, II, Բեյրութ, Համազգային, 1952, էջ. 155:

<sup>11</sup> *Западная Армения в годы Первой Мировой войны*, Дж. Киракосян, Изд. Ереванского Университета, Ереван 1971, с. 51:

<sup>12</sup> Leo Kuper, “Theological Warrants for Genocide: Judaism, Islam, and Christianity” in *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, ed by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, p.25.

<sup>13</sup> Զիհադի հռչակման մանրամասների համար տե՛ս օրինակ՝ Ն. Մարգարյան, Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում իսլամի գործոնի հարցի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես», № 2(2), 2014, էջ 55-67:

յով այն նաև կրոնական պարտականություն: Հայոց ցեղասպանության ընթացքում բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել, երբ բնակչությունն ուղղորդվում է դեպի սպանության գործընթաց հենց իսլամական կոչերով և հորդորներով:

Օրինակ, 1915 թ. ապրիլի 29-ից մայիսի 12-ը օսմանյան խորհրդարանի պատգամավոր Փիրինչիզադե Ֆեյզին այցելեց Ջեզիրեի գյուղերը՝ հորդորելով քրդական ցեղերին կատարել իրենց «կրոնական պարտականությունը»: «Ֆեյզին հոջաների աջակցությամբ հրահրում էր բնակչությանը՝ օգտագործելով ավելի շատ կրոնական կոչեր ընդդեմ «անհավատների», քան թյուրքական ազգայնական գաղափարները: Մեկ կարգախոս կրկնվում էր ամենուր. «Աստված, նրանց երեխաներին որբեր դարձրու, իրենց կանանց՝ այրիներ... և տուր նրանց ունեցվածքը մահմեդականներին»: Թալանը, սպանությունները և առևանգումը լեգիտիմացվում էին, հայտարարվում էր, որ օրինական է, երբ մուսուլմանները վերցնում են անհավատների գույքը, կյանքը և կանանց»<sup>14</sup>:

Պատահական չէ, որ հայ բնակչության ոչնչացման քաղաքականության կրոնական լեգիտիմացումը շատ դեպքերում իրականացվում էր անմիջապես կրոնական առաջնորդների կողմից, հենց իսլամ հոգևորականներն էին առաջնորդում մուսուլմանների շարասյունները և կոչ անում նրանց պատժել անհավատներին: Հոգևորականները ջարդերից առաջ մզկիթներում մահմեդական ազգաբնակչությանը հորդորել են բազմապատկել ոճիրների, կողոպուտների ու ավերածությունների թիվը՝ ըստ այդմ արժանանալով Մուհամեդի գոհունակությանը<sup>15</sup>: Այդ հորդորները մեծապես նպաստում էին զանգվածների մոլեռանդության աճին, խթանում ջարդարարների գործողությունների ազատությունը՝ պատճառ դառնալով նոր, ավելի մեծ չափերի հասնող ավերածությունների: Մահմեդական հոգևորականների մասնակցությունը կոտորածների իրականացմանը ավելացնում էր բնակչության խանդավառությունը: Կարելի է խոսել նույնիսկ նրանց դերակատարության ավանդույթի մասին, քանի որ նույնանման դրսևորումներ արձանագրվել են նաև համիդյան կոտորածների շրջանում և Ադանայի ջարդերի ժամանակ:

Այսպես, Սամսունի ռուսական փոխհյուպատոսը Կ.Պոլսում դեսպան Նելիդովին 1897 թ. մարտի 27-ին գեկուցում է Թոքաթում տեղի ունեցած խժոժությունների մասին ու նշում, որ «Այս ցավալի իրադարձությունը ամենուրեք մուսուլմանների միջավայրում ուժգին խմորում է առաջացրել, որոնք իրենց միջի առավել ունևորների և մահմեդական հոգևորականության կողմից հրահրվել են կոտորելու հայերին... Ամասիայում... տեղական սոֆթաները և մոլլաները եկել են շուկա և սրել տվել դանակները, խանչալները և այլն, բացելիբաց հայտարարելով, թե դա արվում է քրիստոնյաներին կոտորելու համար...»<sup>16</sup>:

<sup>14</sup> Raymond Kévorkian, *The Armenian Genocide*, I.B.Tauris, 2011, p. 360.

<sup>15</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ Մ. Գ. Ներսիսյանի, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, «Հայաստան», 1991, էջ 138:

<sup>16</sup> Սամսունում Ռուսաստանի փոխհյուպատոսի գեկույցը Կ.Պոլսում դեսպան Նելիդովին, 1897 թ. մարտի 27, АВВР, Посольство в Константинополе, д. 31Б5, л. 4-6, ըստ Հայերի ցեղասպանություն-

Կրոնական մոլեռանդության մասին բազմաթիվ հիշատակումներ կան նաև քրիստոնական փաստաթղթերում: Այսպես, Մերսինում քրիստոնական փոխհյուպատոս Լիլիարդոպուլոն հաղորդում է հյուպատոսի պաշտոնակատար Քեթոնին այն մասին, որ «...վալի Խոջա Իզեթ բեյի ժամանելուց ի վեր մոլեռանդությունը հասել է իր գագաթնակետին: Քրիստոնյաներն ընդհանրապես և հայերը մասնավորապես տառապում են դրանից. օր չկա, որ ինչ-որ մի նոր բան չծագի:... Նա փակեց ավտոհովի մանր առևտրականների համարյա բոլոր խանութները՝ պատրվակ բռնելով, թե դրանք գտնվում են մեչիդի կամ գերեզմանոցի մոտերքում և այլն: Եթե մահմեդականն ուզում է քրիստոնյայից վրեժ լուծել, դրա համար բավական է, որ ներկայացնի երկու վկա, որոնք հաստատեն, թե նա անարգել է մահմեդական կրոնը. սրա համար կամ թե այդ մարդու պատիվը վիրավորելու համար տեղնուտեղը բանտ են նետում»<sup>17</sup>:

Հաճախ կրոնական պատճառաբանությամբ սպանություններին տրվում էր ծեսի բնույթ: Նման հիշատակում կա ռուսական դեսպանության՝ 1895 թ. դեկտեմբերի 14-ին գրված մի գեկուցագրի մեջ. «... Չիչմեում խնայվել էր քառասուն անվանի հայերի կյանքը, որոնց թույլ էին տվել ապաստանելու եկեղեցում: Սակայն մի շաբաթ անց շեյխերից մեկը, դատապարտելով այդ քառասուն հայերի հանդեպ դրսևորած չափավորությունը, նրանց առաջարկեց մահմեդականություն ընդունել: Հայերը հրաժարվեցին: Շեյխը հրամայեց, որ նրանց մեկը մյուսի հետևից սպանեն եկեղեցու շենին: Նա եկեղեցու մոտին և մի ուրիշ հայի ստիպեց ներկա լինել այդ սպանությանը, իսկ ապա կարգադրեց, որ նրանց դիակները ոտներին թոկ գցած քարշ տան տանեն դեպի գետը: Շեյխն այդ բանը բացատրել էր, թե՛ «շուն գյավուրներին ձեռք տալ չեմ ուզում, որ չպղծվեմ»<sup>18</sup>:

Կրոնական նշանակալի գործոնի առկայության մասին վկայում են նաև քրիստոնեական հաստատությունների դեմ կատարված ոտնձգությունները: Այսպես, 1895 թ. հոկտեմբերի 20-ին Դիարբեքիրում Ֆաթիհ փաշայի մզկիթից դուրս գալով՝ ելուզակներն ավերել են Ս. Սարգիս եկեղեցին՝ դաժանությամբ կոտորելով հոգևորականներին<sup>19</sup>: Ըստ ականատեսի վկայության՝ նրանք քանդեցին տաճարներն (խորանները) ու գարշելի պղծություն գործածեցին անդ. պատառեցին, գնտակահարեցին սրբոց պատկերները, ս. գրյանց մատենադարանի և դպրոցի գրյանքը պատառելով՝ կոյուղիներն ու ջրհորները լեցուցին, վերջապես բնաջինջ ըրին թանկարժեք հնութիւնքը<sup>20</sup>:

Այն, թե ինչ նշանակություն ուներ կրոնական գործոնը մուսուլմանական զանգվածների համար Հայոց ցեղասպանության ընթացքում, ցույց է տալիս մի հետաքրքիր դրվագ, որ պատմվում է ռուսական «День» թերթում: Թղթակիցը, մեջբերելով

նր... էջ 192:

<sup>17</sup> Correspondence relating to the Asiatic provinces of Turkey: 1892-1893. Turkey, No. 3, (1896), London, 1896, p.32, ըստ Ներսիսյան Մ., Հայերի ցեղասպանությունը..., էջ 25:

<sup>18</sup> АВПР, Посольство в Константинополе, д. 3184, ըստ Հայերի ցեղասպանությունը, էջ 117:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>20</sup> Նույն տեղում:

Խլաթում հանձնված թուրքական բանակի մի լևանտացի քրիստոնյա բժշկի օրագիրը, նկարագրելով սարսափելի պայմանները, որում գտնվում են և ստիպված են կռվել օսմանյան բանակի զինվորները, նշում է, որ «...այդ սովահար, ուժասպառ մարդիկ միավորվել էին սուկ «գազավաթի»՝ քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի ընդհանուր գաղափարով, որն այստեղ՝ փոքրասիական այս խուլ վայրերում, դեռ ընդունակ է կրոնականորեն տրամադրված մահմեդականների գլուխները մշուշել և սրտերը բոցավառել: Այստեղից էլ անօգնական հայերի հանդեպ գազանությունների ու բռնությունների այն աներևակայելի պատկերները, որոնց հանդիպել էր օրագրի հեղինակը իր ճանապարհի առաջին օրվանից մինչև վերջինը»<sup>21</sup>:

### բ. Հայերը որպես ստորադասներ

Օսմանյան կայսրությունը կրոնապետություն էր, և պետության ղեկավարը՝ սուլթանը, միաժամանակ նաև խալիֆա էր՝ աշխարհի բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդը: Երկրի օրենսդրությունը հիմնվում էր շարիաթի վրա, և կրոնական խմբերին տրվող իրավունքները և կարգավիճակը հստակ սահմանվում էին հենց իսլամական օրենքներով:

Իսլամի բաժանելու, սեփական բացառիկությունը և գերազանցությունն ընդգծելու հակվածությունը գերազանցում էր այլ կրոնների հանդեպ իր անվանական հանդուրժողականությունը: Այս հանգամանքը կենսական դեր ունի՝ հասկանալու համար մահմեդական, բայց միաժամանակ նաև բազմազգ համակարգը, ինչպիսին էր Օսմանյան Թուրքիան<sup>22</sup>:

Օսմանյան համակարգը հպատակներին ստրկացնելու հակված քաղաքական մի միավոր էր, որ խարսխվում էր ի սկզբանե ամրակայված գերակայության և ենթակայության դերաբաշխման վրա: Օսմանյան հասարակության համար հիմնարար իրողություն էր մեկ խմբի՝ թուրքերի գերիշխանությունը և մյուսի՝ հայերի (նաև ասորիների, հույների և այլ ոչ մահմեդական փոքրամասնությունների) ենթակա կարգավիճակը: Օսմանյան պետությունում, բազմաթիվ այլ կայսրությունների նման, մասնավորապես իսլամական կայսրությունների, այս անհավասարության համակարգն ամրագրված էր իրավաբանորեն և ոչ մահմեդական հպատակները ստորադասված էին մինչև երկրորդ կարգի քաղաքացիների կարգավիճակի<sup>23</sup>:

Օսմանյան կայսրությունը կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերությունները կարգավորում էր *միլլեթների* համակարգի միջոցով: Յուրաքանչյուր կրոնական միավոր առանձին իրավական կարգավիճակ էր ստանում: Միլլեթի անդամները զրկվում էին քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից,

<sup>21</sup> «День», 1915, 6 сентября, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 430:

<sup>22</sup> Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide ...*, p. 3.

<sup>23</sup> Rouben Paul Adalian, “The Armenian Genocide”, in *Centuries of Genocide: Essays and Eyewitness Accounts*, edited by Samuel Totten and William S. Parsons, London and New York, Routledge, 2004, pp.60-62, Bat Ye’or. *The Dhimmis: Jews and Christians under Islam*, pp. 48,49, 62, 67, 70, 76, 84, 89, 108, 140-41, 143, 154-56 in Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide*, p. 4.



սակայն որոշակի կրոնական, մշակութային ինքնավարություն էին ստանում: Միլլեթի գլուխ կանգնած էր հոգևոր առաջնորդը: Հայկական միլլեթը ստեղծվեց 1461 թ.<sup>24</sup>, իսկ 1830 թ. ստեղծվեցին հայ կաթոլիկների և 1850 թ. հայ ավետարանչականների միլլեթները<sup>25</sup>:

Միլլեթների բաժանումը որոշ չափով նաև համապատասխանում է ցեղապանագետ Գ.Սթենթոնի կողմից առաջարկված Ցեղասպանությունների իրականացման ութ, հետագայում նաև 10 փուլերից մեկի՝ classification<sup>26</sup> փուլին, քանի որ իրավաբանորեն հաստատում է հասարակության մեջ տարբեր աստիճանի և կարգավիճակի խմբերի գոյությունը: Այլադավաններին զրկելով քաղաքական և քաղաքացիական իրավունքներից և փոխադրելով դեպի ստորադաս քաղաքացիների՝ «հանդուրժելի անհավատների» կարգավիճակ՝ Օսմանյան կայսրությունն ի սկզբանե կանխորոշում էր նրանց նկատմամբ համապատասխան վերաբերմունքը:

Թեև միլլեթների համակարգը ճանաչում էր ոչ մուսուլմանների սեփական կրոնը դավանելու իրավունքները, սակայն վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ ընդգծված բռնի էր: Նրանց անվանում էին «զիմմիներ»<sup>27</sup> կամ «ռայաներ»<sup>28</sup> և զրկում էական իրավունքներից, ինչպես նաև տարբեր ձևերով հարստահարում: Օրինակ, տարբեր ժամանակաշրջաններում քրիստոնյաներին չէր թույլատրվում

<sup>24</sup> Wilhelm Baum, *The Christian Minorities in Turkey*, Kitab-Verlag Klagenfurt-Wien, 2006.

<sup>25</sup> Davit Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, Piscataway, NJ, 2006, pp. 12-13.

<sup>26</sup> «1. Դասակարգում: Բոլոր մշակույթներում առկա է մարդկանց բաժանումը «մենք և նրանք» խմբերի՝ ըստ էթնիկ պատկանելության, ռասայի, կրոնի և ազգության՝ գերմանացի և հրեա, հույոս և թուրքի: Ցեղասպանությունն առավել հավանական է այն երկրներում, որոնք չունեն միախառնված խմբեր. դրանցից են, օրինակ, Ռուսաստան և Բուրունդին: Հիմնական կանխարգելիչ միջոցառումը այս վաղ փուլում համընդհանուր հաստատությունների ստեղծումն է, որոնք կոչված են վերափոխելու էթնիկ կամ ռասայական բաժանումները, ակտիվորեն նպաստելու հանդուրժողականության ու փոխըմբռնման մթնոլորտի ձևավորմանը և քարոզելու դասակարգումներ, որոնք վեր են բաժանումներից...» <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>

<sup>27</sup> Զիմմի (արաբ.՝ պայմանագրի մարդիկ), մուսուլմանական պետություններում այլակրոն (հատկապես քրիստոնյա և մովսիսական) համայնքներին պատկանող հպատակներ: Անվանումն առաջացել է արաբական արշավանքների ընթացքում (VII դարում), երբ նվաճողները որոշ ժողովուրդների թույլատրեցին դավանել իրենց կրոնը: Արաբները պաշտպանում էին այդ ժողովուրդների կրոնական համայնքները՝ պայմանով, որ նրանք հպատակվեն իրենց, օգնեն «անհավատների» դեմ մղվող «սրբազան» պատերազմում և գլխահարկ վճարեն:

<sup>28</sup> Ռայա (արաբ.՝ հպատակներ, հոտ), սկզբնական շրջանում այսպես էին անվանում պետության բոլոր հպատակներին, հետագայում այս անվանումը ստացավ վիրավորական բնորոշում և օգտագործվում էր միայն քրիստոնյաների վերաբերյալ:

բարձր եկեղեցիներ կառուցել<sup>29</sup>, թանկարժեք և վառ գույների զգեստներ հագնել<sup>30</sup>, զենք կրել կամ ձի նստել, նրանց խոսքը չունենալ և այլն արժեքը դատարանում, ինչ մուսուլմանի վկայությունը<sup>31</sup>: Հայերի տները մշտապես ավելի շատ էին հարկվում, քան մուսուլմանների տները: Հայկական հողերն անպատիժ բռնագավթվում էին:

Թուրք գիտնական Բերկեշը նշում է, որ այս կարգավիճակի բարդությունը պայմանավորված էր շարիաթով, որը չի կարող ընդունել [ոչ մահմեդական] հպատակների հավասարությունն օրենքով կարգավորվող հարցերում: Ավելին, նույնիսկ հետագայում ընդունված աշխարհիկ օրենքները չեն ենթադրում իրավական հավասարություն մահմեդականների և ոչ մահմեդականների միջև<sup>32</sup>:

XIX դ. կեսերին Օսմանյան կայսրությունում հայտարարվեցին բարենորոգումների՝ թանգիմաթի մի քանի ծրագրեր: Պետք է հիշել, թե ինչ վերաբերումնք կար Օսմանյան կայսրությունում ցանկացած բարեփոխման նկատմամբ: Ըստ արևելագետ Վ. Բարտոլդի. «...պետական ու հասարակական կյանքի ամեն մի նորամուծություն համարվում է հանցագործություն կրոնի նկատմամբ»<sup>33</sup>: Սա հաստատում է նաև թուրք պատմաբան Թ. Թունայան՝ նշելով, որ նման այլ ցանկացած մահմեդական պետության, Օսմանյան կայսրության մեջ տեսականորեն որևէ բարեփոխում

<sup>29</sup> «Հիշյալ եկեղեցու առաջին հարկը նախապես տուն է եղել, և հետագայում անհավատները դրա վրա եկեղեցի են կառուցել: Երբ տեղեկացվեց, որ այս [տոր կառույցը] իր բարձրությամբ գերազանցել է այնտեղ գտնվող տներին, հրամայել էի քանդել և հավասարեցնել մյուս տների հետ» («Պալաթի դարպասից դուրս անօրինական կառուցված եկեղեցին քանդելու մասին» (հրամանագիրը տրված է սուլթան Սուլեյման I-ի կողմից, 3 հոկտեմբերի, 1565 թ.) Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր, *Պարսկական հանդես*, 1983, № 4, էջ 202)

<sup>30</sup> «Սրանից առաջ իմ կայսերական հրամանը եղավ, որ հրեաները, քրիստոնյաները և այլ անհավատներ բարձր տեսակի պատրաստի հագուստներ չհագնեն... Այսուհետև հրեաների և այլ անհավատների ֆերաջները (լայն թևերով, ծածկոցանման շոր, որի մեջ փաթաթվում են մահմեդական կանայք) լինելու են սև չովսաներից, թեմկաները (հագուստի մի տեսակ) ոչ թե կերպասից, այլ աստառացու կտորից, գլխի փաթոցները կես վարդագույն և կես կարմիր թող լինեն և արժեքն էլ 30-40 [դուրուշից / ոչ ավելի: Մաշիկները պետք է լինեն սև գույնի, հասարակ և առանց աստաթի: Թող այլ գույնի չլինի...» («Ոչ մահմեդականների տարազի տեսակների մասին» (հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից 1 օգոստոսի, 1568թ., Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր, *Պարսկական հանդես*, 1983, № 4, էջ 202):

<sup>31</sup> Տե՛ս օրինակ, Shahkeh Yaylaian Setian, *Humanity In the Midst of Inhumanity*, Xlibris, 2011, p.91, Robert Melson, *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, University of Chicago Press, 1996, p. 249, Peter Balakian, *The Burning Tigris*, HarperCollins, 2004, pp. 40-43, Bat Ye'or, *Islam and Dhimmitude: Where Civilizations Collide*, Fairleigh Dickinson Univ Pr, 2001, p. 372.

<sup>32</sup> N. Berkes, *The Development of Secularism in Turkey* (Montreal, 1964), 94, in Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide...*, p. 4.

<sup>33</sup> В. В. Бартольд, Турция, ислам и христианство. Соч., т. VI, М., 1966, с. 413, ըստ Օսմանյան ֆեոդալիզմի մի քանի բնորոշ կողմերի մասին, Հ. Իսմիկեան, *Պարսկական հանդես*, 1982, № 2, էջ 40:

անհրաժեշտ չէր համարվում, քանի որ նրա կառուցվածքը և մարդկային փոխհարաբերությունները մշտապես ու անխախտ տրված են Ղուրանում ու շարիաթում<sup>34</sup>:

*Գյուլիսանեի հաթթը շերիֆի* (Գյուլիսանեի հրովարտակ) 1839 թ. հրապարակմամբ առաջին անգամ ճանաչում էր ոչ մուսուլմանների հավասարության սկզբունքը, իսկ 1856 թ. ավելի ծավալուն բարեփոխումների ակտը՝ *հաթթը հյունայունը* նույնիսկ հատուկ արգելում էր նրանց նկատմամբ խտրականությունը: Բացի այդ թույլատրվում էր ոչ մահմեդականների զինապարտությունը, հոչակվում էին հոգևոր տուրքերի և պարհակների վերացման, հպատակների քաղաքացիական իրավունքների ընդլայնման, քրեական օրենսդրության բարեփոխման մասին դրույթները: Իսկ ամենակարևոր ձեռքբերումը թերևս համայնքների վարչական վերաձևման և ապակենտրոնացման համար ստեղծված հնարավորությունն էր: Ընդ որում դա արվելու էր աշխարհիկ սկզբունքների հիման վրա, ինչն էլ հիմք հանդիսացավ փոքրամասնությունների ազգային կանոնադրություններ ստեղծելու համար<sup>35</sup>:

Մրանք հեղափոխական նորամուծություններ էին, սակայն այդպես էլ իրականում կյանքի չկոչվեցին, քանի որ ոչ միայն հակասության մեջ էին մտնում իսլամական օրենքի՝ շարիաթի, այլ նաև ժողովրդական սովորության՝ աղաթի հետ:

Այս կապակցությամբ թուրք պատմաբաններից մեկը գրում է, որ ժողովուրդը հառաչում էր. «Այսօր մենք կորցրինք մեր սրբազան ազգային իրավունքը, որը նվաճել էին մեր նախնիներն իրենց արյունով: Իսլամի ժողովուրդը, որ իշխող ժողովուրդն էր՝ *milleti hakime*, գրկվեց այդ իրավունքից»: Սա իսլամական ժողովրդի համար լավու ու սգալու օր է»<sup>36</sup>: Հետագայում կանխելու համար եվրոպական միջամտությունը ընդունվեց նաև «Միդհատյան» սահմանադրությունը, որը հոչակեց Օսմանյան կայսրության բոլոր հպատակների հավասարությունը, հայտարարեց նրանց հավասարությունն օրենքի առաջ անկախ կրոնական պատկանելությունից (հոդված 8) և նրանց իրավունքներն ու պարտականություններն առանց «կրոնական նախապաշարմունքների» (հոդված 17): Սակայն նույնիսկ այս սահմանադրությունն ընդգծում էր իսլամի առաջնությունը և փաստացի բոլոր զիջումներն անիմաստ դարձնում: Եվ հայերի ցանկացած քայլ, որն ուղղված էր օրենքներով կամ սահմանադրությամբ իրենց վերապահված իրավունքը գործադրելու մասին ձայն բարձրացնելուն, դաժանորեն ճնշվում էր: Այսպես, ամենահայտնի փորձն արվեց 1895 թ. սեպտեմբերի 18-ին/հոկտեմբերի 1-ին, երբ հնչակյանները ցույց կազմակերպեցին Կ. Պոլսում: Շուրջ 4 հազար ցուցարարներ շարվեցին դեպի թուրքական կառավարության նստավայր Բաբ Ալին՝ սուլթանին և եվրոպական տերություններին ուղղված պահանջագիր հանձնելու մտադրությամբ: Պահանջագրում նկարագրվում էին Սասունում թուրքական բանակի կողմից կատարված վայրագությունները, հայ

<sup>34</sup> T. Z. Tunaya, *Turkiyenin siyasi hayatında, harekati*, 1960, s. 18, ըստ Օսմանյան ֆեոդալիզմի մի քանի բնորոշ կողմերի մասին, Հ. Ինճիկեան, *Պարմարանասիրական հանդես*, 1982, № 2, էջ 40:

<sup>35</sup> Գևորգ Չատինյան, Օսմանյան Թուրքիայի համայնքների կանոնադրությունների շուրջ. *Պարմարանասիրական հանդես*, № 2, 2011, էջ 133,

<sup>36</sup> A. Cevdet Paja, *Tezdkir (Memoirs)*, vol. I. C. Baysun. ed (Ankara. 1953), 68 in Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide...*, p. 19, 20.

ժողովրդի ծանր կացությունը և իշխանությունների անգործությունը: Առաջարկվում էր վերջ տալ անօրինություններին և ապահովել հայ ժողովրդի քաղաքացիական իրավունքները, հավասար հարկումը, կյանքի, ունեցվածքի և պատվի երաշխիքները, ինչպես նաև անվտանգությունը քրդերի շարունակվող հարձակումներից: Ոստիկանությունը թույլ չտվեց հանձնել խնդրագիրը: Ցույցն ավարտվեց քաղաքում հայերի ընդհանուր ջարդով:

Բացի իրավական առումով ստորադաս լինելուց, հայկական բնակչությունը նաև մշտապես հարստահարվում և նվաստացվում էր: Նրա համար ստեղծվել էր բռնությունների ու մշտական ճնշման մի միջավայր:

Այս պարագայում Հայոց Ազգային խորհուրդը Կ.Պոլսում 1870 թ. նոյեմբերի 27-ին նույնիսկ ստեղծել էր հատուկ հանձնաժողով, որը պետք է արձանագրեր և ստուգեր գավառից եկած բազմաթիվ «բռնության գործողությունների» մասին տեղեկությունը: Նրա կողմից կազմված «Գավառային բռնությունների» առաջին զեկույցն ուղարկվեց Բ. Դոանը 1872 թ. ապրիլի 11-ին, հաջորդն ուղարկվեց 1876 թ. սեպտեմբերի 17-ին: Զեկույցներում նկարագրված են հիմնականում չերքեզ ներգաղթյալների և տեղական քուրդ ու թուրք իշխանիկների անօրինականությունները՝ կապված հարկահավաքության, կանանց նկատմամբ ոտնձգությունների, անպատիժ կողոպուտի և սպանությունների, ինչպես նաև դատարաններում քրիստոնյաների վկայությունների թերաբժնորման հետ<sup>37</sup>:

Հայերի այս ենթակա կարգավիճակը ոչ միայն ուղղակի թուրքական կառավարության հանդեպ էր, այլ նաև ցանկացած մուսուլմանական տեղական առաջնորդի կամ պաշտոնյայի: Վերջիններս այս իրողությունն օգտագործում էին՝ հայերին հարստահարելու համար: Այսպես, կայսրության արդարադատության ու պաշտամունքների նախարար Ռ-գա փաշային ուղղված հերթական նամակում Կ.Պոլսի հայոց պատրիարքը նկարագրում է հետևյալ իրավիճակը. «Հայերի գլխավոր զբաղմունքը երկրագործությունն է: Մինչդեռ հողերը, որ նրանք զբաղեցնում են անհիշելի ժամանակներից, որպես երկրի բնիկներ, հողերը, որոնք պարտացված են նրանց քրտինքով, հողերը, որոնց բերքերով է համալրվում պետական գանձարանը, խլված են նրանցից այս կամ այն ճանապարհով: Մի դեպքում ազդեցիկ անձինք՝ թուրքերը և քրդերը, ավելորդ ներողամտության շնորհիվ, ով նրանց օժտում են պաշտոնական շրջանները, գաղտնի իրենց վրա են գրել տալիս իրենց չպատկանող հողերը և դուրս մղում իսկական հողատերերին: Այլ դեպքում գյուղացիները, որպեսզի իրենց համար կանխավ ապահովեն որևէ ցեղապետի պաշտպանությունը և զերծ մնան վայրագություններից ու կողոպուտներից, ստիպված են իրենց հողերից լավագույնները զիջել նրանց: Պատահում է և այնպես, որ մշտա-

<sup>37</sup> Fatma Muge Gocek, Reading Genocide: Turkish Historiography on 1915, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Ronald Grigor Suny, Fatma Muge Gocek, Norman M. Naimark, Oxford University Press, USA, 2011, p. 58-60

կան թշնամանքով ու անօրենությամբ ապրող ցեղերի պարագլուխների ողորմա-  
ծությանը հանձնված հայերը ստիպված են լինում ամբողջ գյուղեր զիջել»<sup>38</sup>:

Հետաքրքիր վկայություններ են պարունակում նաև լրագրող Էմիլ Դիլլոնի հոդ-  
վածները: Իուլյանդացին 1895 թ. եղել էր Արևմտյան Հայաստանում լուսաբանելու  
տեղի ունեցող իրադարձությունները «Դեյլի Թեյեգրաֆ» թերթի համար: «Տալու  
համար ճշգրիտ պատկեր քաղաքներում քրիստոնյաների և մուսուլմանների հարկ-  
ման դրույքաչափերի տարբերության մասին բավական է նշել, որ Էրզրումում,  
որտեղ կան 8000 մահմեդական տներ, մահմեդականները վճարում են 395,000  
պիաստր, իսկ քրիստոնյաները, որոնց տների թիվը 2000 է, վճարում են 430,000  
պիաստր»<sup>39</sup>: Դիլլոնը նաև գրում է շորթման դեպքերի մասին, որոնք կիրառվում են  
զավթիներին՝ կառավարության գործակալների կողմից: Երբեմն նրանք պահան-  
ջում էին հարկից 3 կամ 4 պիաստր ավել իրենց համար, և սակարկելուց հետո համա-  
ձայնվում էին: Հետո մեկ շաբաթից նրանք վերադառնում էին և կրկին պահանջում  
նույն հարկերը, ժպտալով ասում, որ այն ստացականները, որոնք գյուղացիները  
ցույց էին տալիս, ընդամենը թուրքերեն լեզվով ինչ-որ մի գրքից մի քանի էջեր են:  
«Այնուհետև նրանք պահանջում էին ընտանիքի երիտասարդ կանանց և աղջիկնե-  
րին՝ իրենց դաժան ախորժակը բավարարելու համար, և մերժումը պատժվում էր  
բազմաթիվ խոշտանգումներով, որոնք պարկեշտ մարդկությունը լուրջան վարա-  
գույրով է պատում...»<sup>40</sup>:

Այս անհավասարության և իրավունքների բացակայության համակարգը  
քննարկման չէր ենթարկվում: Հոգեբանական տեսանկյունից առավել վտանգա-  
վորն այն էր, որ այլ էթնիկ փոքրամասնություն կազմող խմբերի իրավունքների  
բացակայությունն ընկալվում էր որպես բնականոն իրավիճակ, շատ բնական  
երևույթ, այնպես, ինչպես որ այն պետք է լիներ: Եվ երբ ինչ-որ մեկը մարտահրա-  
վեր էր նետում համակարգին, դա դառնում էր զարմանքի և զայրույթի աղբյուր,  
ինչին սովորաբար հաջորդվում էր ագրեսիան ճնշվածների նկատմամբ<sup>41</sup>:

Այս պայմաններում երկու կրոնական համայնքների բաժանված համակարգը  
փաստացի ստեղծում էր հասարակության ներսում գոյություն ունեցող հավերժ ու  
անլուծելի հակամարտություն:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերագործարկվեց օսմանյան  
սահմանադրությունը: Թվում էր, թե դա կարող է փոխել իրերի դրությունը<sup>42</sup>:

<sup>38</sup> Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսի պաշտոնակատարը՝ Կ.Պոլսում Ռուսաստանի դես-  
պան Նովիկովին, 1882 թ. մարտի 14-ի №12 զեկույցից, АВІР, Главный архив, д.119, л.48-49, ըստ  
Հայերի ցեղասպանությունը..., էջ 72, 73:

<sup>39</sup> E. J. Dillon, "The Condition of Armenia," *The Contemporary Review* 68 (August 1895), reprinted in  
*The Armenian Massacres 1894-1896*, edited by Arman J. Kirakossian (Detroit: Wayne State University  
Press, 2004), p. 241.

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 242:

<sup>41</sup> R. Adalian, *Remembering and Understanding the Armenian Genocide* (Yerevan: Armenian Genocide  
Museum-Institute, 2008), p. 10.

<sup>42</sup> Հասարակությանը համակած խանդավառության մասին տե՛ս Der Matossian B., *Shattering  
dreams of revolution*, Stanford, 2014:

Վ. Փափազյանը ներկայացնում է՝ ինչ խանդավառություն էր տիրում ամենուր: «Վան քաղաքը հայ և թյուրք – ոտքի վրա է: Զինվորական և քաղաքացիական իշխանությունը բերդին ետև, Ավանց նավահանգիստի ճամբուն վրա, հրաժեշտի հանդես էր կազմակերպած: Զինվորական նվազախումբ, հայերեն-թյուրքերեն ճառեր, օդին մեջ նետված հրահանգներ, բարեմադրություններ և, մանավանդ, երդումներ, թե ամբողջ ժողովուրդը պատրաստ է «մինչև իր արյան վերջին կաթիլը գոհելու սահմանադրության պաշտպանության համար»...սնամեջ ու հազար անգամ կրկնված անկատար խոստումներ»<sup>43</sup>: Վասպուրականի հայությունը ցնծում էր օսմանյան սահմանադրության հռչակման առիթով և նույնիսկ համոզված էր, որ այլևս «...թյուրք անպատասխանատու բաշիբոզուկի, թալանչի քուրտի և պաշտոնական օրգանների ու պետական հիմնարկների կողմից որևէ շնական արարք-թալան, բռնագրավում, բռնի առևանգում և սպանության դեպք չպիտի՝ լիներ»<sup>44</sup>:

Սակայն նույնիսկ հակասությանական լոզունգներով իշխանության եկած իթթի-հատականները վերահաստատեցին իշխող ազգի (milleti hakime) սկզբունքը: Բոլոր օսմանյան հպատակներին խոստանալով ազատություն, արդարություն և հավասարություն՝ նրանք միաժամանակ երդվեցին պահպանել կայսրության դարերով գոյություն ունեցող համակարգը՝ գերիշխող-ենթակա երկվությունը: Այն հրապարակայնորեն հռչակվեց «Թանինի»՝ Իթթիհադ կուսակցության կիսապաշտոնական օրգանի մեջ: Գլխավոր խմբագիր Հուսեյն Ջահիդը (Յալչին) իր խմբագրականում հայտարարեց, որ ոչ մուսուլմաններին տրվելու են նույն իրավունքները, ինչ մուսուլմաններին, սակայն դա չի նշանակելու, որ երկիրը դառնալու է հունական, հայկական կամ բուլղարական: Ըստ նրա՝ երբեք չի ձեռնարկվի ոչ մի միջոց, որը վտանգի տակ կդնի մահմեդականների կենսական շահերը: Անկախ ամեն ինչից, թյուրք ժողովուրդը իշխող ազգն է երկրի և մնալու է այդպիսին<sup>45</sup>: Պաշտոնապես փոխված հայերի և թյուրքերի կարգավիճակները, սակայն, առօրյա կյանքում միայն ավելացրին լարվածությունն առանց այդ էլ բարդ փոխհարաբերություններում:

Միաժամանակ, եթե նույնիսկ իշխանությունները ցանկանային լիովին իրականացնել այն բոլոր պայմանները, որոնք հռչակվում էին սահմանադրությամբ, արևելյան նահանգներում գոյություն ունեցող իրավիճակն անհնար էր դարձնում դա: Այստեղ լիակատար իշխանություն ունեցող թյուրք պաշտոնյաները /հիմնականում քաղաքներում/ և քուրդ ցեղապետերը /հիմնականում գյուղական շրջաններում/ ընկալում էին փոփոխությունները ոչ միայն իբրև իրենց շահերին ու հետաքրքրություններին հարվածող, այլ նաև հայերի օգտին ծառայող երևույթ: Հենց այդ պատճառով էլ նրանք շարունակեցին նույն վերաբերմունքն ու քաղաքականությունը հայերի նկատմամբ՝ ավելի սաստկացնելով բռնություններն ու ճնշումը՝ միաժամանակ ցուցադրելով կառավարությանը, որ անհնար է քաղաքականություն իրակա-

<sup>43</sup> Վ. Փափազյան, *նշվ. աշխ.*, էջ 42-43:

<sup>44</sup> Ս. Սարիառյան, Կյանքիս Հուշերից, Երևան, 2007, էջ 32 ըստ Ա. Հարությունյան, Երիտթյուրքական հեղաշրջման արձագանքները Վանի նահանգում (1908 թ. հուլիս-օգոստոս), *Պարմասրանս-սիրական հանդես*, 2010, № 3, էջ 48:

<sup>45</sup> Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide...*, pp. 168–9, Kevorkian..., 192-193.

նացնել արևելյան շրջաններում առանց տեղական վերնախավի հետ համաձայնության և համագործակցության<sup>46</sup>:

Սակայն երիտթուրքական վերնախավը նույնպես մտադրություն չունեի փոխելու հաստատված իրերի դասավորվածությունը: Դրա վկայություններից մեկը սալոնիկյան գաղտնի խորհրդակցության ժամանակ Թալեթ փաշայի դիրքորոշումն էր, որ նա հնչեցրեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական կոմիտեի անդամների առաջ. «Դուք գիտեք, որ Սահմանադրության համաձայն, հաստատված է մուսուլմանների ու գյավուրների հավասարություն, բայց դուք բոլորդ միասին և յուրաքանչյուրդ առանձին գիտեք ու զգում եք, որ սա անիրագործելի իդեալ է: Շարիաթը, մեր ողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների զգացմունքները, և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների զգացմունքները, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանացմանը, անհաղթահարելի խոչընդոտ են ներկայացնում իրական հավասարություն հաստատելու համար:... Ուստի և չի կարող հավասարության մասին նույնիսկ խոսք լինել, մինչև որ հաջողության չհասնենք կայսրության օսմանացման մեր խնդրում...»<sup>47</sup>: Այս մտայնությունն ամենուր էր: Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը հետաքրքիր դրվագ է ներկայացնում Կ.Պոլսում դեսպան Գիրսին, որը տեղի է ունեցել 1913 թ. մարտին Բասենում: Հետևակային կապիտան Հասան աղան բացեփրաց քարոզել է հայերին շուտափույթ կոտորելու անհրաժեշտությունը: «Մեր այժմյան բոլոր դժվարությունները մեր նախկին քրիստոնեա ուսուցից են գալիս, որի հանդեպ մենք չափից շատ փափկանկատ եղանք, քանի դեռ նա մեր իշխանության տակ էր: Հիմա չպետք է կրկնել նույն այդ սխալը, քանի դեռ ուշ չէ, մանավանդ որ սահմանադրությունն արդեն հավասարեցրել է հայերին ու մուսուլմաններին: Ես իմ կողմից ձեռք եմ առել անհրաժեշտ միջոցներ և Բասենի կազայի քրդական բոլոր գյուղերի քրդերին հորդորել եմ այլևս չհասպաղել կոտորելու հայերին և նրանց ունեցվածքը թալանելու...»: Ադամովը վերջում եզրակացնում է, որ հայերին կոտորելու այդ անթաքույց քարոզը չի կարող իր պտուղները չտալ<sup>48</sup>:

Հայկական վերնախավը բավականին լավ գիտակցում էր իրավիճակի լրջությունը: Երբ 1911 թ. օսմանյան խորհրդարանում Գրիգոր Զոհրապը երկուժամանոց ճառ է արտասանում թուրք-հայկական հարաբերությունների մասին, նա սահմանադրական վարչակարգի երեք տարիների վերաբերյալ բավականին հոռետեսական, բայց պրագմատիկ գնահատականի է հանգում: «Փոքր-ինչ միամիտ կլինեք, - ասել է նա, - հավատալ, որ այս երկրում, պարզապես սահմանադրությունը հոչա-

<sup>46</sup> Fatma Muge Gocek, Reading Genocide: Turkish Historiography on 1915, *A Question of Genocide*: p.62-63.

<sup>47</sup> British Documents on the origins of the war. 1898-1914. Edited by G. P. Gooch and Harold Temperley. Vol. IX. The Balkan wars. Part I. The Prelude; The Tripoli war. London, 1933, p. 208-209 ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 266-267:

<sup>48</sup> Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ադամովի զեկույցից Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսին, և ապրիլի, 1913թ., АВІР, Посольство в Константинополе, д. 2684, л. 36-37, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 311:

կելով կարելի է փոխել Օսմանյան բնակչության ընդհանուր վերաբերմունքը [ում աչքերում], քրիստոնյաները երբեք չեն կարող լինել հավասար մահմեդականներին, նրանց, ովքեր միակն են, որ ունեն իրավունքներ»<sup>49</sup>:

#### **գ. Հայերը՝ որպես հավանական զոհ (անպատժելիությունը և կոտորածների ավանդույթը)**

Հայերի առանձնացումը /հայերը՝ որպես անհավատներ/ և ստորադասումը /հայերը՝ որպես երկրորդ կարգի քաղաքացիներ/ թեև ծանր պայմանների մեջ էին դնում վերջիններին, սակայն նրանց նկատմամբ բռնի միջոցների կիրառման թույլատրելիությունը և անպատժելիությունն էին իրավիճակը մահացու վտանգավոր դարձնում: Դա մեծապես ավելացնում էր թիրախավորվելու հնարավորությունները և հայերին տալիս էր հավելյալ հավանական զոհի կարգավիճակ:

Օսմանյան կայսրությունն ուներ քաղաքական և սոցիալական խնդիրները բռնի մեթոդներով, նույնիսկ կոտորածներով լուծելու մեծ փորձ: Գոյության ողջ ընթացքում Օսմանյան կայսրությունն իր քրիստոնյա հպատակների (հույների, սերբերի, բուլղարացիների, ասորիների, ինչպես նաև կայսրության այլ փոքրամասնությունների նկատմամբ), այդ թվում՝ հայերի<sup>50</sup>, հետ հարաբերություններում լայնորեն կիրառում էր բռնությունը՝ սպանություններ, բռնի մահմեդականացում, մանկահավաք<sup>51</sup>, առևանգումներ, պատվազրկում և թալան: Կազմակերպված կամ տարերային բռնությունները կայսրության միասնությունը պահելու և այլ ներքին խնդիրների լուծման կարևորագույն միջոցներ էին համարվում:

Օսմանցի թուրքերը, իրենց համարելով անհավատների դեմ պայքարի առաջամարտիկ, առանձնակի դաժանություն էին ցուցաբերում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Դիմադրություն ցույց տվող անհավատը կամ գյավուրը ենթակա էր ոչնչացման: Շատ հաճախ պատժիչ գործողությունները ստանում էին համակարգված ու մշակված ոչնչացման կամ ահաբեկման ծրագրի տեսք, որի զոհն էին

<sup>49</sup> Adenakrutian, op. cit., records of the 25 November 1911 Session, pp. 430–44 in Kevorkian, p. 115.

<sup>50</sup> Կարելի է հիշատակել 1641 թ. մեծ վեզիր Կարա Մուսթաֆայի կողմից հրահանգված Բրուսայի հայերի նկատմամբ զանգվածային բռնությունները, 1662 թ.՝ Ահմեդ փաշայի կողմից կազմակերպված, 1662 թ. ճնշումները Կ.Պոլսի հայության դեմ (Дж. Киракосян, *Западная Армения в годы Первой Мировой войны*, изд. Ереванского Университета, Ереван 1971, стр. 42): Հատկանշական է նաև հայերի դեպքում զանգվածային բնաջնջման առաջին փորձը, որն արձանագրվեց 1725 թ., երբ թուրքական սուլթան Ահմեդ III-ը (1703-1730), Սյունիքի և Արցախի հայության դիմադրությանը հանդիպելով, վերջիններիս բնաջնջելու հատուկ ֆեթվա (հրաման) արձակեց՝ դեպի Կասպից ծով արշավող օսմանցիների ճանապարհին արգելափակելու համար (Демоян Г., *Турция и Карабахский конфликт*, Ер., Авторское издание, 2006):

<sup>51</sup> Օսմանյան Թուրքիայի կանոնավոր «ենիչերի» գորախմբերի շարքերը համալրելու նպատակով թուրքերը կիրառում էին մանկահավաքը կամ դեղիբուն (արյան հարկ)՝ հպատակ քրիստոնյա երեխաների բռնի հավաքագրումը և իսլամացումը: Այս դաժան գործողությունը սկիզբ առավ Մուրադ I սուլթանի (1359-1390 թթ.) օրոք և շարունակվեց մինչև XIX դարի սկիզբը: Այն նախապես կատարվում էր 3 կամ 5 տարին մեկ անգամ, իսկ XVI դարից՝ յուրաքանչյուր տարի: Մանկահավաքներ էին կատարվում Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյա ժողովուրդներից՝ հույներից, բուլղարներից, սերբերից, բալկանյան այլ ժողովուրդներից, ինչպես նաև հայերից:



դառնում բնակչության ոչ միայն անհնազանդ հատվածը, այլև ամբողջ ժողովուրդը: Կոտորածները, պատժիչ արշավանքները, որոնց ընթացքում թիրախ համայնքի նկատմամբ ամենադաժան հաշվեհարդար էր իրականացվում, բազմաթիվ են օսմանյան պետության պատմության ընթացքում<sup>52</sup>:

Ենթակա փոքրամասնություններին մշտապես բռնության սպառնալիքի տակ պահող նման մշակույթներն Ի. Չարնին իրավամբ անվանում է «Ֆաշիստական մշակույթներ»՝ նշելով, որ նրանք պատժում են չենթարկվելու դեպքում, ներշնչում գերազանցության զգացում բոլոր նրանց հանդեպ, ում համարում են ցածր: Ցեղասպանագետ Ջեյմս Ուոլլերն անվանում է նման հասարակությունները «դաժանության մշակույթներ»<sup>53</sup> և նաև պարզապես «ատելության մշակույթներ»:

Լինդա Վուլֆը և Մայքլ Հալսիզերն իրենց հերթին առանձնացնում են երեք հիմնական հատկանիշներ այն հասարակության համար, որը կարելի է կոչել «բռնության մշակույթի» հասարակություն<sup>54</sup>: Դրանք են ագրեսիայի օգտագործումը որպես խնդրի լուծման նորմատիվ հնտություն, հակում դեպի կոնֆլիկտը, որը հիմնված է ենթադրական սպառնալիքի վրա, և գերակայության գաղափարախոսություն, որը հիմնված է հակահումանիստական պատմության վրա, այդ թվում՝ խտրականության և մշակութային բազմազանության մերժման երկարաժամկետ ինստիտուցիոնալացման վրա: Շատ հասարակություններում ագրեսիան, բռնությունն այնքան շատ են առօրյա կյանքում, որ նրանք հաճախ ընկալվում են իբրև բնական վիճակ: Քսաներորդ դարի բոլոր մեծ ցեղասպանություններն իրականացվել են այն երկրներում կամ այն պետությունների կողմից, որոնք ունեն ագրեսիվ հակամարտությունների և պատերազմների երկար պատմություն: Ագրեսիայի պատմությամբ մշակույթները և մասնավորապես նրանք, որոնք փառաբանում են բռնության մշակույթը (օրինակ՝ զինվորական շքերթներով, հերոսական բռնությունը քարոզող լրատվամիջոցներով) բռնության տարբեր ձևերի իրականացման դիսկի գոտում են<sup>55</sup>:

Օսմանյան կայսրությունն այս առումով դասական «բռնության մշակույթ» ունեցող պետություն էր: Այս ավանդույթն ուժեղանում էր նաև շնորհիվ այն դերի, որ ունեւր զինվորականությունն օսմանյան պետության ստեղծման ամենաառաջին օրվանից և կայսրության զարգացման ամբողջ ընթացքում: Բրիտանացի օսմանագետ Փոլ Վիթթերը նշում է, որ օսմանյան պետությունն իր ստեղծման փուլից հանդես է եկել որպես դազիների պետություն, որի հիմնական առաքելությունն էր

<sup>52</sup> *The Massacres of Chios Described in Contemporary Diplomatic Reports*, ed. by Argenti, Philip P., London, John Lane the Bodley Head Ltd, 1932, Morison, W. A. *The Revolt of the Serbs against the Turks: (1804-1813)*, Cambridge University Press, 2012, James J. Reid, Batak 1876: A massacre and its significance, *Journal of Genocide Research*, vol. 2, no. 3 (2000), Anahit Khosroeva, Assyrian Genocide in the Ottoman Empire and Adjacent Territories, *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, edited by Richard Hovannisian, New Brunswick, New Jersey, Transaction Publishers, 2007.

<sup>53</sup> J. Waller, *Becoming evil*, New York: Oxford University Press, 2002

<sup>54</sup> Linda M. Woolf & Michael R. Hulsizer, Psychosocial roots of genocide: risk, prevention, and intervention, *Journal of Genocide Research*, vol.7, no.1, 2005, p. 102

<sup>55</sup> Նույն տեղում:

պետականության ստեղծումը իսլամի կրոնի ռազմատենչ մեկնաբանության վրա<sup>56</sup>: Հետագայում էլ բարձրաստիճան գինվորականները, յենիչերիների ընտիր ջոկատները մեծ ազդեցություն ունեին Օսմանյան կայսրության զարգացման և իշխանության ձևավորման վրա: Երիտթուրքերը շարունակեցին այդ ավանդույթը: Նրանց հայացքներն ամբողջովին ներծծված էին ռազմատենչ գաղափարախոսությամբ, որը նաև գրավիչ էր գինվորականության համար:

Ըստ Շուքրյու Հանիօղլուի՝ Ստամբուլի ռազմական ակադեմիան ավարտած երիտասարդ սպաների շրջանում մեծ հեղինակություն էր վայելում գերմանացի գեներալ Կոլմար վոն դեր Գոլցի տեսությունը, որը հասարակության մեջ գինվորականությանը հատուկ դեր էր հատկացնում: Եվ պատահական չէ, որ այդ սպաներից շատերը հայտնվեցին Միություն և առաջադիմություն կոմիտեում, որը նույնպես իրեն ընկալում էր իբրև օրենքից վեր գտնվող կիսառազմական կառույց<sup>57</sup>: Ըստ Հանիօղլուի «Օսմանյան կայսրությունում, որտեղ գինվորականությունն ավանդաբար խաղացել է ավելի նշանակալի դեր քաղաքականության ձևավորման մեջ, քան շատ եվրոպական պետություններում, գինվորականության վերածնունդն իբրև գերիշխող ուժ, համեմատաբար հեշտ ստացվեց»: Նույնիսկ երիտթուրքական կուսակցության կենտրոնի քաղաքացիական անդամներն ունեին սերտ կապեր գինվորական ավանդույթների հետ: Այսպես, դոկտորներ Բեհաեդդին Շաքիրը և Նազրմը երկուսն էլ ուսանել էին ռազմաբժշկական դպրոցում<sup>58</sup>:

Այս պայմաններում ամենօրյա անպատիժ բռնությունն Օսմանյան կայսրությունում չափազանց տարածված երևույթ էր: Այն հյուծում էր հայկական համայնքը, որը, գտնվելով մշտական սպառնալիքի տակ, ավելի ու ավելի մեծ չափերով էր զգում սեփական խոցելիություն աստիճանը:

Ազգաբնակչությունը բազմաթիվ նամակներ, խնդրանքներ ու աղերսներ է ուղարկում պատրիարքին ու կաթողիկոսին՝ նկարագրելով այն բոլոր անօրինականություններն ու բռնությունները, որին ենթարկվում է հայ ժողովուրդը: Այսպես, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ IV-ին 1876 թ. ուղղված դիմումում ասվում է: «Զօր ու գիշեր, միշտ և հանապազ տագնապի մեջ, դաժանորեն տառապում ենք գավառական պաշտոնյաների, հարկահանների, կառավարիչների և այլ բռնավորների ձեռքին, ընդհուպ մինչև այն, որ նրանք անպատվում են մեր եկեղեցական հովվին, մեր կանանց համեստությունը, մեր աղջիկների պատիվը, հեղում են մեր երիտասարդների և ծերերի արյունը, անարգում մեր տաճարի ու ծեսերի սրբու-

<sup>56</sup> Տե՛ս P. Wittek, *The Rise of the Ottoman Empire*, London: the Royal Asiatic Society of Great Britain and Ireland], 1938, «Ղազինների պետության տեսության» մասին տե՛ս նաև Ռ. Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրության ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920)*, Երևան: Լուսակն, 2009, էջ 103-113.

<sup>57</sup> Şükrü Hanioglu, *Preparation for a Revolution*, Oxford University Press, 2001, p. 294.

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 295:

թյունը»<sup>59</sup>: Բազմաթիվ նման հիշատակումներ կան նաև օտարերկրյա դիվանագետների զեկուցագրերում<sup>60</sup>:

Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Մաքսիմովը 1895 թ. մարտին զեկուցագիր է գրում Կ.Պոլսում դեսպան Նելիդովին՝ ներկայացնելով հետևակային չառու Մուստաֆա Մուլեյման օղլու պատմածը Սասունի դեպքերի մասին, որում երևում է ցանկացած կարգազանցության համար դաժան պատժի ենթարկելու սովորությունը: «Գնդապետ Իսմայիլ բեյը եկել է զորքերի հրամանատարությունը ստանձնելու համար... [նրա ուղեկցությամբ զորահանդեսին ներկայացած մեկը՝ մուշիլի վեքիլը (ներկայացուցիչը)] մոտեցել է՝ ձեռքին մի թուղթ, որը կարդացել է քարտուղարը: Դա սուլթանի ֆիրման է եղել, որում ասվել է, թե հայերը խռովություն են բարձրացրել ընդդեմ նորին մեծության և թե հայերին պետք է պատժել՝ նրանց արյունը թափելով, որպեսզի ուրիշներին խրատ լինի: Դրանից հետո Իսմայիլ բեյն արտասանել է մի ճառ, որով զինվորներին գրգռել է, որ գյուղերը կրակի ճարակ դարձնեն և խռովարարներին կոտորեն՝ ավելացնելով, թե նրանք կարող են անել ինչ որ կամենան, այն պայմանով, որ ոչնչացնեն ամեն կենդանի շուն, թե այսպիսին է սուլթանի հրամանը»<sup>61</sup>:

Նույնիսկ այն դեպքում, եթե թուրքական իշխանությունները ձևացնում էին, թե պատրաստվում են արդարադատություն իրականացնել, դա կրում էր ձևական բնույթ: Սովորաբար ստեղծվում էին հանձնաժողովներ, սակայն տուժած հայ բնակիչներին կամ չէին թույլատրում մասնակցել քննությանը, կամ վախեցնելով ստիպում էին հրաժարվել բողոքներից: Օրինակ, Սասունի իրադարձությունների շուրջ ստեղծված հանձնաժողովի աշխատանքի ժամանակ գրանցվել է նման դեպք, երբ վկաները «մեծ մասամբ չեն պատասխանում տրված հարցերին՝ պատրվակ բռնելով, թե բոլորովին անտեղյակ են այն ամենից, ինչ տեղի է ունեցել գյուղերում իրենց փախչելուց հետո: ... մարտի 4/16 նիստում սեմալցի ուն Շահբազ, որի ամուսինը, իր ասելով, սպանվել է Գելիեզուզանում, տալիս է լիովին որոշակի և հանգամանալից պատասխաններ: Իսկ հաջորդ օրը՝ Մուշում մի գիշեր անցկացնելուց հետո, նա հրաժարվեց որևէ բան ավելացնել իր նախկին ցուցմունքներին: Վերադառնալով գյուղ՝ նա իր որդուն ասել է. «Ճշմարտությունը ասելուց մեզ ի՞նչ օգուտ: Հենց դրա համար էլ մեզ կարող են սպանել, ինչպես հորդ սպանեցին»: Տավորիկցի Գևորգ (փետրվարի 28-ի նիստ), որը մեկ գիշեր թողնվել էր ոստիկանական կոմիսարի հսկողության տակ, մյուս օրը հրաժարվեց իր մտադրությունից ցուցմունք տալ 1894 թվին Տավորիկում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ»: Երկու վկաները՝ տալ-

<sup>59</sup> Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ.228, փաստաթուղթ 2 ըստ Հայերի ցեղասպանությունը..., էջ IV:

<sup>60</sup> Տե՛ս օրինակ, *Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey, 1892-93*. Turkey, No. 3 (1896), London, 1896.

<sup>61</sup> Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Նելիդովին, 1895 թ. մարտի 18-ի №123 զեկույցից, АВПР, Посольство в Константинополе, д. 3176, п. 97-98, ըստ Հայերի ցեղասպանությունը..., էջ 61, 62:

վորիկցի Մգրոն (փետրվարի 28-ի նիստ) և սեմալցի Եդոն (փետրվարի 17-ի նիստ), հանձնաժողովին իրենց տված ցուցմունքներից հետո ձերբակալվել են Մուշում»<sup>62</sup>:

Ամենօրյա բռնությունը մշտապես առկա էր հայկական նահանգներում: Օրինակ՝ Կ.Պոլսում ռուսական դեսպան Ջինովկը ճեպագիր է ուղարկում Արտաքին գործերի նախարարություն նկարագրելով Մուշի ավերված ու հրկիզված Մոկունք գյուղի դեպքը: Այդ նույն զեկուցագրում նա նշում է, որ «...ընթացիկ տարվա հունվարից Մուշի և Մասունի գյուղերում սպանվել է 64 հայ, վիրավորվել է 18...»<sup>63</sup>: Այդ իրավիճակի մասին տեղեկություն հայտնած Վանի փոխհյուպատոսը նշում է, որ «...հայ բնակչությունը երկրամասում միանգամայն իրավագուրկ վիճակում է: Թուրքական իշխանությունները ոչ միայն ոչինչ չեն անում, որպեսզի ապահովեն նրանց անձնական ու գույքային անձեռնմխելիությունը, այլև բացահայտորեն խրախուսում են նման խախտումները...»<sup>64</sup>:

Այս անպատժելիության երևույթը բացահայտ էր և սովորական: Մեկ այլ դեպք նկարագրում է Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսն իր զեկույցում Կ.Պոլսում դեսպան Ջինովկին, երբ թուրքական սահմանային կայազորը կանխել է 11 ընտանիքների՝ Ռուսաստան անցնելու փորձը և գազանաբար մորթել է բոլոր տղամարդկանց, թվով 16 հոգի: Հյուպատոս Սկրյաբինը նշում է. «...կասկած չկա, որ Էրզրումի վալին չի ձեռնարկի ո՛չ սպանության հետաքննություն, ո՛չ էլ միջոցներ է ձեռք առնելու ոճրագործություն կատարած սահմանապահ զինվորներին տույժի ենթարկելու համար»<sup>65</sup>:

Հայկական կոտորածների ավանդույթն ավելի դաժան էր դառնում և ինտենսիվություն ստանում անպատժելիության մթնոլորտում: Դրա օրինակները հազարավոր են: Օրինակ, Վանից «Մշակ» թերթին 1876 թ. դեկտեմբերի 19 (31)-ին ուղարկված մի նամակում, նկարագրելով դեկտեմբերի 1 (13)-ին հայկական խանութների և գործասենյակների կողոպուտն ու ավերումը, նշվում է, որ «Կառավարության պաշտոնյաներն ալ թեն ոմանք ներկա, բայց իբր անկարող զսպել թուրքաց կատաղությունը, լոկ հանդիսատես կլինեն և ոմանք ալ կքաջալերեն իսկ: ... Հայերը թեն անգեն, անպատրաստ և շվարած մնացած, բայց մահը աչք առած կուզեն յուրյանց խանութները և վաճառքները ազատել: Զորքերը սվիններով և հրացանի բուններով

<sup>62</sup> Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսության կրտսեր քարտուղարը՝ գլխավոր հյուպատոս Մաքսիմովին, 1895 թ. մարտի 20-ի №4 զեկույցից, АВІР, Посольство в Константинополе, д.3176, л. 103, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 65:

<sup>63</sup> Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ջինովկի ճեպագրից ուղղված Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարությանը, 1901 թ. սեպտեմբերի 20-ին (հոկտ. 3), АВІР, Политархив, д.3454, л. 36, ըստ Ներսիսյան Մ., *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 204:

<sup>64</sup> Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսության զեկույցից՝ ուղղված Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանությանը, 1901 թ. նոյեմբերի 27, АВІР, Политархив, д. 3454, л. 58, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 205:

<sup>65</sup> Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսի №315 զեկույցից Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ջինովկին 1906 թ. հուլիսի 21, АВІР, Политархив, д.3456, л. 22, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 215, 216:

կհարվածեն գնոսա, որով ծանրապես հիվանդացողներ, հիմարացողներ և մեռնողներ ալ եղան»<sup>66</sup>:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո նոր կարգերի հաստատումը գրեթե չփոխեց իրավիճակը:

Հետաքրքիր է, որ երբ 1909 թ. Ադանայի կոտորածների մասնակիցներից 42 թուրք մահապատժի դատապարտվեցին, թուրքական հասարակական կարծիքը բացահայտ ու սուր թշնամանքով ընդունեց այս աննախադեպ դատավճիռը, նույնիսկ այն պարագայում, որ «մահապատժի ենթարկված մուսուլմանները հասարակ ժողովրդից են, և մեծամեծներից՝ խառնակչությունների իսկական մեղավորներից ոչ մեկը պատասխանատվության չի ենթարկվել»<sup>67</sup>, և, բացի այդ, նրանց մասնակցությունը հայերի կոտորածներին կասկած չէր հարուցում:

Ինչպես հաղորդում էր ռուս ականատես Շելկովնիկովը, «...իսկական մեղավորներն ու մարդասպանները՝ իշխանություններն ու մակեդոնական [երիտթուրքական] գործերը չեն էլ մտածում թաքնվել, նրանք դրա կարիքը չունեն, քանի որ նրանք իրենք ռազմական դատարանների և հետաքննական հանձնաժողովի անդամներ են, և նրանք իրենք են այժմ կարգ պահպանում այն երկրում, որտեղ իրենց իսկ ձեռքով կոտորվել են 25-30 հազար քրիստոնյաներ»<sup>68</sup>:

Հիմնական կազմակերպիչների պատիժների թվարկումը միայն բավարար է ներկայացնելու համար, թե ինչ աստիճանի էր հասնում անպատժելիությունը հայերի նկատմամբ ամենադաժան ոճրագործություններ կատարելու համար: Ջնադին արգելվեց վեց տարվա ընթացքում զբաղեցնել պետական պաշտոն, բայց նա շարունակում էր ստանալ աշխատավարձ, Մուսթաֆա Ռեմզին դատապարտվեց երեք ամիս բանտարկության, որը, սակայն, չիրականացվեց, Ասաֆ բեյին չէր թույլատրվում զբաղեցնել պաշտոններ չորս տարվա ընթացքում, Բիսան Ֆիքրին վտարվեց Ադանայից, Իթիդալից նրա գործընկեր Իսմայիլ Մաֆան մեկ ամիս անցկացրեց բանտում, Օսման բեյը՝ Ադանայի կայագործի հրամանատարը, բանտարկվեց երեք ամսով: Աբդուլ կադիր Բադդադգադեն արտաքսվեց Հիջազ երկու տարով, սակայն հետո համաներման ենթարկվեց սահմանադրության վերագործարկման մեկ տարվա կապակցությամբ<sup>69</sup>: Իթիհատական կառավարության ցինիզմը բնորոշելու համար որպես հավելում կարելի է նաև հիշատակել այն փաստը, որ վեր-

<sup>66</sup> «Մշակ», 24 փետրվարի 1877 թ., № 13, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 3:

<sup>67</sup> Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովևը Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Իգլոյսկուն, 116 ճեպագրից, Պերա, 30 մայիսի (12 հունիսի) 1909 թ. АВПР, Канцелярия МИД, д. 35, л. 255-257, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ. 234:

<sup>68</sup> Կովկասի ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնակատարը 1909 թ. հուլիսի 15-ի զեկույցից Գլխավոր շտաբի գեներալ-կվարտիրմեստերին, ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1004, л. 223-225, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 237:

<sup>69</sup> AMAE, Correspondance politique, Turquie, n. s., vol. 283, f° 16421, 24, 33, Mersine, 11 and 21 September 1909, , Kévorkian Raymond, *The Armenian Genocide...*, p. 106.

ջինս՝ Ադանայի կոտորածի գլխավոր մեղավորներից մեկը, հետագայում աղետյալներին օգնող թուրքական կոմիտեի նախագահ նշանակվեց<sup>70</sup>:

1911 թ. փետրվարի 14-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքը հերթական թաքրիրն է ուղարկում Թուրքիայի արդարադատության նախարարին, որում նշում է. «Հայ ժողովուրդը ջանաց մոռնալ այս ահավոր անցյալի ամբողջ արհավիրքը, զայն զոհաբերելու համար օսմանյան մանուկ սահմանադրության, այն հույսով, որ նոր կարգերը արմատապես վերջ պիտի տային կյանքի, պատիվի, ահապահովության և քաղաքական բացառիկ վիճակներուն, և պիտի թույլատրեին անձնատուր ըլլալու խաղաղ քաղաքակրթական առաջադիմությանը... Դժբախտաբար, ոչ միայն այդ սկսված բարենորոգչական նախաձեռնարկը հանկարծ ընդմիջվեցավ, այլ դեռ հայերուն վիճակվեց կրել այնպիսի եղեռական, սոսկալի արհավիրք մը, որ համիտյան շրջանի պատմական արյունահեղությունները ու տառապանքները գերազանցեց»: Սրանից հետո պատրիարքը թվարկում է այն բոլոր անարդարությունները, կամայականությունները ու բռնությունները, որոնց ենթարկվում է հայ ժողովուրդը, ինչպես նաև արձանագրվում են կոնկրետ դեպքեր: Օրինակ. «3. Երկար ատենն ի վեր ձերբակալված շատ մը հոչակավոր ոճրագործներու դատերը ցարդ ձգձգելով՝ անոնցմե և ոչ մեկը իր ոճիրին համապատասխան պատիժ լրեց (Պիթլիս՝ Թեմբանի, Խութի, Ալճավազի սպանությանց հեղինակները), Վան՝ Կրավլը, Շաքիր, Ճաֆատ, Գատիր, Բեշիտ և այլն ոճրագործներու շատերն ալ անպարտ արձակվեցան (Պիթլիս՝ Մասսլը, Փափուրե, Կինճո, Մուշ՝ հաջի Ֆերո, և այլն, Խաչզան՝ Պշարե Ճեմիլ):

Լրջորեն ու ուժգնորեն չհետապնդվեցին այն ավագակները ու մարդասպանները, որոնք քամի մը տասնյակ զինված ծառաներով բազմաթիվ ոճիրներ գործեցին և կգործեն (Վան՝ Սայիտ, Սըրմեո, Միր Մհե, մամե և այլն, Պիթլիս՝ Պշարե Չաթո, Խութի ոճրագործներ, Գասըմ պեյի ծառա Խալիլ և այլն): Չհետապնդվեցան նույնիսկ սահմանադրական ներման արժանացած և կրկին ոճիրներու դերակատար հանդիսացողները (Սեյիտ Ալի, Հուսեյին փաշա, Պերվարը Թահար աղա, Կեցանի Մուսա պեյ և այլն), և ոմանք ալ չպատժվելե գատ՝ պետական պաշտոններով վարձատրվեցան (Պիթլիս՝ Խիյանի մյուտիր Քյոր Ալո, Փեչարի մյուտիր Ալի պեյ, Կինճի իտարե Աղասի, Տերելի Մահմետ պեյ: Վան՝ Կեցանի Մուսա պեյ՝ Օրման մյուտիրի և այլն)»<sup>71</sup>:

Պետք է նկատել, որ անպատժելիության պատճառներից էր նաև տեղերում շատ առաջնորդների՝ փաշաների և բեյերի ուժեղ դիրքը: Այսպես օրինակ, երբ ամերիկյան համալսարաններից մեկի դասախոսը սպառնաց տեղական փաշային, որ բողոքելու է իրեն հասցված վիրավորանքի համար, վերջինս հայտարարեց, որ տվյալ շրջանի լիիրավ տերն է ու իրավասու է անել այն ամենը, ինչը որ ցանկա-

<sup>70</sup> «Հառաջ», 7. III. 1919 ըստ Տաճիկ կառավարությունը եվ իրթիհատը մարդկության դատարանի առաջ, Տիգրան Հովհաննիսյան, *Պայրմա-քանասիրական հանդես*, 2006, № 3, էջ 275:

<sup>71</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ.57, ց.5, գ.15, թ.3-8, ըստ *Հայերի ցեղասպանությունը...*, էջ 270-273:

նա<sup>72</sup>: Սակայն միաժամանակ հակահայկական գործողությունները կարող էին նաև ուղղակիորեն խրախուսվել: Այսպես կատարված վայրագությունների համար սուլթանը շքանշանով է պատվել ջարդարարների գնդի հրամանատար Ջեքի փաշային և մետաքսյա դրոշներ ուղարկել չորս կիսառազմականացված ջոկատների առաջնորդներին<sup>73</sup>:

Անպատժելիությունն այն աստիճան էր հասնում, որ սպանությունների գործընթաց ներգրավվելը դառնում էր նույնիսկ պարծենալու առարկա: Այսպես, օրինակ, 1915-ի օգոստոսի 3-ին Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն գրում է օրագրում, որ Թավեաթը հպարտությամբ ասում էր ընկերներին. «Երեք ամսում ես արել եմ ավելի շատ բան հայկական խնդրի լուծման համար, քան Աբդուլ Համիդը երեսուն տարվա մեջ»<sup>74</sup>:

Ինչպես նշում է Դադրյանը, անպատժելիությունը ստեղծում էր բոլոր պայմանները վտանգավոր խոցելիության առաջացման համար, որն էլ իր հերթին քաջալերում էր պոտենցիալ հանցագործներին<sup>75</sup>: Պարբերաբար կրկնվող բռնությունները ստեղծում էին մի անպատժելիության մթնոլորտ, որում հայերը ողջ սրությամբ զգում էին իրենց անպաշտպանությունը և ամեն պահի գոհ դառնալու հավանականությունը:

\* \* \*

Այսպիսով, կարելի է վստահաբար խոսել մինչև Հայոց ցեղասպանության իրականացման տարիներն Օսմանյան կայսրությունում որոշակի մթնոլորտի առկայության մասին, որը կարող էր վերաճել և վերաճեց հայ բնակչության համար մահացու վտանգի: Հայերի թիրախավորումը որպես անհավատների՝ գյավուրների, արդեն իսկ նրանց կրոնական տեսակետից դարձնում էր հակակրանքի առարկա: Դրան գումարվում էր նաև այն արհամարհական վերաբերմունքը, որ կար կայսրության քրիստոնեական համայնքների ներկայացուցիչների հանդեպ, որպես երկրորդ կարգի քաղաքացիների: Եվ քանի որ հայերը զրկված էին զենք կրելու կամ ինքնապաշտպանվելու իրավունքից, դրանով նրանք դրվել էին մշտապես խոցելի վիճակի մեջ: Նրանց հանդեպ լեզվատիմացված անպատժելի բռնությունը դարձել էր գործիք, որն օգտագործում էր օսմանյան պետությունը՝ սեփական բազմաթիվ խնդիրները լուծելու համար:

<sup>72</sup> Robert Stein, Armenia Must Have a European Governor. – “The Arena”. Boston, vol. 12, 1895, c. 368  
 ըստ *Младотурки перед судом истории*. Ереван, изд. Айастан, 1986 г., с. 22:

<sup>73</sup> *Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.* Предисловие проф. Л. А. Камаровского. М., 1896, с. 225-230.

<sup>74</sup> Morgenthau, *Ambassador Morgenthau’s Story*, Publisher Garden City, N.Y., 1918, p. 342.

<sup>75</sup> Vahakn N. Dadrian, “The Agency of “Triggering Mechanisms” as a Factor in the Organization of the Genocide against the Armenians of Kayseri District, *Genocide Studies and Prevention*: Vol. 1, Iss. 2, p. 115.

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ» ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

*Սուրեն Մանուկյան*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության ընթացքում միլիոնավոր մարդիկ այս կամ այն կերպ մասնակցեցին հայերի ոչնչացման գործընթացին. կազմակերպեցին, աջակցեցին կամ իրականացրին հայերի բնաջնջման «նախագիծը»: Թուրքական հասարակության մեջ ցեղասպանություն իրականացնելու, սպանության գործընթաց ներգրավվելու ցանկությունը մեկ օրում ու հանկարծակի չառաջացավ, այն հիմնված էր դարերով եկած, ամուր արմատացած որոշակի սոցիալական կարծրատիպերի և ընկալման կադապարների վրա: Այս նախապաշարմունքները, հասարակության մեջ գոյություն ունեցող ելակետային դրոյթները, որոնք կարելի է անվանել նաև «մշակութային արմատներ», շատ կարևոր են, քանի որ տալիս են այն հիմքը, որի վրա հետագայում հնարավոր է լինում կառուցել «ատելության տաճարը», լայնամասշտաբ ու նպատակաուղղված ատելության քարոզչություն իրականացնել:

Օսմանյան կայսրության մահմեդական բնակչության մտածողության մեջ ձևավորել էին հայերի երեք «պատմական» ընկալումներ՝ հայերը որպես «անհավատներ», որպես «ստորադասներ» և հայերն իբրև «հնարավոր զոհ»: Այս երեք ընկալումները երբեմն հանդես էին գալիս իբրև առանձին երևույթներ, իսկ հաճախ նաև միահյուսվում և միաձուլվում էին մեկ զգացման մեջ:

**Բանալի բառեր՝** զանգվածային մասնակցություն, ցեղասպանության գաղափարախոսություն, ատելության քարոզ, հայերի թիրախավորում:

“CULTURAL” ROOTS OF MASS PARTICIPATION DURING THE ARMENIAN  
GENOCIDE

*Suren Manukyan*

SUMMARY

Millions of people were in different ways involved in the process of extermination of Armenians by organizing, supporting and carrying out a “project” of annihilation during the Armenian genocide. The readiness of Turkish population to participate in the implementation of genocide and their involvement in the killing process didn’t crop up suddenly. It was based on an age-long history of negative and even rancorous predisposition and ingrained stereotypes of the certain social perception. These prejudices existing in the society, which can also be called “cultural roots”, were crucial as they became the basis to create “the temple of hatred” for a large-scale anti-Armenian propaganda campaign.

Three “historical” perceptions of Armenians as outsiders dominated in the Muslims’ mindset for a long time -Armenians as infidels, as subordinates, and potential victims.



These three views sometimes acted as separate phenomena, but often were intertwined in the form of a complex attitude towards the Armenian population of the empire.

**Keywords:** mass participation, ideology of Genocide, hate speech, indoctrination, Armenians as potential victims

## «КУЛЬТУРНЫЕ» ПРЕДПОСЫЛКИ МАССОВОГО УЧАСТИЯ В ГЕНОЦИДЕ АРМЯН

*Сурен Манукян*

### РЕЗЮМЕ

Во время геноцида миллионы людей были тем или иным образом вовлечены в процесс истребления армян – организовали, способствовали или осуществляли «проект» уничтожения. В турецком обществе желание участвовать в осуществлении геноцида, вовлечения в процесс убийства возникло на вдруг и не сразу. Оно было основано на сформировавшихся веками предрассудках и прочно укоренившихся определенных социальных стереотипах восприятия. Эти предрассудки, существующие в обществе представления, которые также можно назвать «культурными корнями» очень важны, потому что они являются основой, на которой можно воздвигнуть «храм ненависти» для проведения кампании широкомасштабной антиармянской пропаганды.

В сознании мусульманского населения Османской империи армяне «исторически» воспринимались как «неверные», армяне как «подчиненные» и армяне как «потенциальные жертвы». Эти три представления иногда появлялись как отдельные явления, но часто переплетались и выступали в форме комплексного отношения к армянскому населению империи.

**Ключевые слова:** массовое участие, идеология Геноцида, пропаганда ненависти.